ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-19/07-1

ք.Երևան «07» 06 2019 թ.

ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Գ. Գրիգորյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Ֆոտոն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Պետրոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ջնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի **6.5** կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի **2.3.3** կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի **2.1.2** կետի բ) ենթակետին և (կամ) **2.1.5** կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի **2.2.2** կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի **6.2** և **6.3** կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի **2.1.7** կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **928536** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու

վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է **www.procurement.am** հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է **15** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի **N 1, N 2, N 3** և **N 3.1** հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե Հասցե՝ Արշակունյաց 7 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900013220042 ՀՎՀՀ 02534328 Գլխավոր քարտուղար---------- Գոհար Գրիգորյան /ստորագրություն/ Կ.Տ	<<ՖՈՏՈՆ>> ՍՊԸ Ք. Երևան,Ռոստոմի 58, <<ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ>> ՓԲԸ Հ/Հ 16044050085000, ՀՎՀՀ 90036001 _____ Լ.ՊԵՏՐՈՍՅԱՆ Կ.Տ

Հավելված N 1
ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-19/07-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ծագման երկիրը**	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
1	39121100/6	Գրասեղան 1	ՀՀ		հատ	18326.85	128288	7	Ք. Երևան, Արշակունյաց 7	7	Պայմանագրի հաշվառման պահից 20 օրացույցային օր
2	39121100/7	Գրասեղան 1*	ՀՀ		հատ	18646	18646	1	Ք. Երևան, Արշակունյաց 7	1	Պայմանագրի հաշվառման պահից 20 օրացույցային օր
3	39121100/8	Գրասեղան 2	ՀՀ		հատ	17938	35876	2	Ք. Երևան, Արշակունյաց 7	2	Պայմանագրի հաշվառման պահից 20 օրացույցային օր
4	39121100/9	Գրասեղան 3	ՀՀ		հատ	18778	56334	3	Ք. Երևան, Արշակունյաց 7	3	Պայմանագրի հաշվառման պահից 20 օրացույցային օր
5	39121420/3	Կողաղիր սեղան 1	ՀՀ		հատ	16678	100068	6	Ք. Երևան, Արշակունյաց 7	6	Պայմանագրի հաշվառման պահից 20 օրացույցային օր
6	39121200/4	Դիմաղիր սեղան	ՀՀ		հատ	12236	12236	1	Ք. Երևան, Արշակունյաց 7	1	Պայմանագրի հաշվառման պահից 20 օրացույցային օր
7	39121200/3	Անցակետի սեղան	ՀՀ		հատ	16026	16026	1	Ք. Երևան, Արշակունյաց 7	1	Պայմանագրի հաշվառման պահից 20 օրացույցային օր
10	39141260/3	Զգեստապահարան 1	ՀՀ		հատ	48876	146628	3	Ք. Երևան, Արշակունյաց	3	Պայմանագրի հաշվառման

									7		պահից 20 օրացույցային օր
12	39121520/8	Գրապահարան 1	ՀՀ		հատ	39960	239760	6	Ք. Երևան, Արշակունյաց 7	6	Պայմանագրի հաշվառման պահից 20 օրացույցային օր
14	39121520/10	Գրապահարան 3	ՀՀ		հատ	29844	119376	4	Ք. Երևան, Արշակունյաց 7	4	Պայմանագրի հաշվառման պահից 20 օրացույցային օր
15	39121200/5	Տպիչ սեղան	ՀՀ		հատ	20050	20050	1	Ք. Երևան, Արշակունյաց 7	1	Պայմանագրի հաշվառման պահից 20 օրացույցային օր
16	39121100/10	Գրասեղան 4	ՀՀ		հատ	16740	16740	1	Ք. Երևան, Արշակունյաց 7	1	Պայմանագրի հաշվառման պահից 20 օրացույցային օր
17	39121420/4	Կողաղիր սեղան 2	ՀՀ		հատ	18508	18508	1	Ք. Երևան, Արշակունյաց 7	1	Պայմանագրի հաշվառման պահից 20 օրացույցային օր

Հ/Բ	Անվանումը՝	Տեխնիկական բնութագիր	Քանակ
1	Գրասեղան 1	Չափսերը՝ 1500x700x750մմ Պատրաստված է լամինացված ԴՍՊ-ից՝ 18 մմ հաստությամբ: Սեղանածածկի եզրերը՝ համապատասխան գույնի պրոֆիլապատ՝ 40մմ հաստություն ստանալու համար: Սեղանի ոտքերն ու կոնստրուկցիան 20x30մմ մետաղական խողովակներից: Մետաղական մասերը ներկել սպիտակ գույնով: Բացառությամբ սեղանի ոտքերից մեկի՝ այն ներկել նարնջագույն, համապատասխան ֆիրմային ոճի ուղեցույցի: Մետաղական ոտքերի տակ օգտագործել բարձիկներ: Գունային երանգները եւ պրոֆիլը համաձայնեցնել պատվիրատուի հետ:	7

2	Գրասեղան 1*	Չափսերը՝ 1500x700x750մմ Պատրաստված է լամինացված ԴՍՊ-ից՝ 18 մմ հաստությամբ: Սեղանածածկի եզրերը՝ համապատասխան գույնի պրոֆիլապատ՝ 40մմ հաստություն ստանալու համար: Սեղանի ոտքերն ու կոնստրուկցիան 20x30մմ մետաղական խողովակներից՝ ներկված սպիտակ գույնով: Բացառությամբ սեղանի ոտքերից մեկի՝ այն ներկել նարնջագույն, համապատասխան ֆիրմային ոճի ուղեցույցի: Մետաղական ոտքերի տակ օգտագործել բարձիկներ: Գունային երանգները եւ պրոֆիլը համաձայնեցնել պատվիրատուի հետ:	1
3	Գրասեղան 2	Չափսերը՝ 1400x700x750 մմ Պատրաստված է լամինացված ԴՍՊ-ից՝ 18 մմ հաստությամբ: Սեղանածածկի եզրերը՝ համապատասխան գույնի պրոֆիլապատ՝ 40մմ հաստություն ստանալու համար: Սեղանի ոտքերն ու կոնստրուկցիան 20x30մմ մետաղական խողովակներից՝ ներկված սպիտակ գույնով: Բացառությամբ սեղանի ոտքերից մեկի՝ այն ներկել նարնջագույն, համապատասխան ֆիրմային ոճի ուղեցույցի: Մետաղական ոտքերի տակ օգտագործել բարձիկներ: Գունային երանգները եւ պրոֆիլը համաձայնեցնել պատվիրատուի հետ:	2
4	Գրասեղան 3	Չափսերը՝ 1700x700x750 մմ Պատրաստված է լամինացված ԴՍՊ-ից՝ 18 մմ հաստությամբ: Սեղանածածկի եզրերը՝ համապատասխան գույնի պրոֆիլապատ՝ 40 մմ հաստություն ստանալու համար: Սեղանի ոտքերն ու ՝ կոնստրուկցիան 20x30մմ մետաղական խողովակներից՝ ներկված սպիտակ գույնով: Բացառությամբ սեղանի ոտքերից մեկի՝ այն ներկել նարնջագույն, համապատասխան ֆիրմային ոճի ուղեցույցի: Մետաղական ոտքերի տակ օգտագործել բարձիկներ: Գունային երանգները եւ պրոֆիլը համաձայնեցնել պատվիրատուի հետ:	3
5	Կողադիր սեղան 1	Չափսերը՝ 1500x400x670 մմ Պատրաստված է լամինացված ԴՍՊ-ից՝ 18 մմ հաստությամբ: Սեղանածածկի եզրերը՝ համապատասխան գույնի պրոֆիլապատ՝ 40 մմ հաստություն ստանալու համար: Սեղանի ոտքերն ու կոնստրուկցիան 20x30մմ մետաղական խողովակներից՝ ներկված սպիտակ գույնով: Բացառությամբ սեղանի ոտքերից մեկի՝ այն ներկել | նարնջագույն, համապատասխան ֆիրմային ոճի ուղեցույցի: Կիրառվում է նաեւ 10x20մմ մետաղական խողովակ եւ 20:20 անկյունակ՝ բաց դարակի համար: Մետաղական ոտքերի տակ Օգտագործել բարձիկներ: Գունային երանգները եւ պրոֆիլը համաձայնեցնել պատվիրատուի հետ:	6
6	Դիմադիր սեղան	Չափսերը՝ 900x500x670 մմ Պատրաստված է լամինացված ԴՍՊ-ից՝ 18 մմ հաստությամբ: Սեղանածածկի եզրերը՝ համապատասխան գույնի պրոֆիլապատ՝ 40մմ հաստություն ստանալու համար: Սեղանի ոտքերն ու կոնստրուկցիան 20x30մմ մետաղական խողովակներից՝ ներկված սպիտակ գույնով: Բացառությամբ սեղանի ոտքերից մեկի՝ այն ներկել նարնջագույն, համապատասխան ֆիրմային ոճի ուղեցույցի: Մետաղական ոտքերի տակ օգտագործել բարձիկներ: Գունային երանգները եւ պրոֆիլը համաձայնեցնել պատվիրատուի	1

		հետ:	
7	Անցակետի սեղան	Չափսերը՝ 1500x500x950 մմ Պատրաստված է լամինացված ԴՍՊ-ից՝ 18 մմ հաստությամբ: Սեղանածածկի եզրերը՝ համապատասխան գույնի պրոֆիլապատ՝ 40մմ հաստություն ստանալու համար: Սեղանի ոտքերն ու կոնստրուկցիան 20x30մմ մետաղական խողովակներից՝ ներկված նարնջագույն, համապատասխան ֆիրմային ոճի ուղեցույցի: Մետաղական ոտքերի տակ օգտագործել բարձիկներ: Գունային երանգները եւ պրոֆիլը համաձայնեցնել պատվիրատուի հետ:	1
10	Զգեստապահարան 1	Չափսերը՝ 1200x600x2100 մմ Պատրաստված է լամինացված ԴՍՊ-ից՝ 18 մմ հաստությամբ, եզրերը՝ համապատասխան գույնի պրոֆիլապատ: Երկդուռ պահարանի ձախ մասում՝ կախիչների ձող, աջ մասի դարակների ներքեւում ետնապատին՝ անցք՝ սառնարանի տեղադրման պարագայում հոսանքի լարի համար: Պահարանի բռնակները, գունային երանգները եւ պրոֆիլը համաձայնեցնել պատվիրատուի հետ:	3
12	Գրապահարան 1	Չափսերը՝ 1200x400x2100 մմ Պատրաստված է լամինացված ԴՍՊ-ից՝ 18 մմ հաստությամբ, եզրերը՝ համապատասխան գույնի պրոֆիլապատ: Ստորին հատվածում՝ երկդուռ պահարան, վերեւում՝ բաց դարակներ՝ ուղղահայաց բաժանումով: Պահարանի բռնակները, գունային երանգները եւ պրոֆիլը համաձայնեցնել պատվիրատուի հետ:	6
14	Գրապահարան 3	Չափսերը՝ 1000x400x2100 մմ Պատրաստված է լամինացված ԴՍՊ-ից՝ 18 մմ հաստությամբ, եզրերը՝ համապատասխան գույնի պրոֆիլապատ: Ստորին հատվածում՝ 20x30 սպիտակ ներկված մետաղական խողովակից ոտք՝ գոյություն ունեցող հարթակին հենման համար: Գոյություն ունեցող հարթակի չափերը վերցնել տեղում: Վերեւում՝ բաց դարակներ՝ ուղղահայաց բաժանումով: Գունային երանգները եւ պրոֆիլը համաձայնեցնել պատվիրատուի հետ:	4
15	Տպիչ սեղան	Չափսերը՝ 1000x600x620 մմ Պատրաստված է լամինացված ԴՍՊ-ից՝ 18 մմ հաստությամբ, եզրերը՝ համապատասխան գույնի պրոֆիլապատ: Ստորին հատվածում՝ 20x30 սպիտակ ներկված մետաղական խողովակից ոտք՝ գոյություն ունեցող հարթակին հենման համար: Գոյություն ունեցող հարթակի չափերը վերցնել տեղում: Գունային երանգները եւ պրոֆիլը համաձայնեցնել պատվիրատուի հետ:	1

16	Գրասեղան 4	Չափսերը՝ 1700x770x750 մմ Պատրաստված է լամինացված ԴՍՊ-ից՝ 18 մմ հաստությամբ: Սեղանածածկի եզրերը՝ համապատասխան գույնի պրոֆիլապատ՝ 40մմ հաստություն ստանալու համար: Սեղանի ոտքերն ու կոնստրուկցիան 20x30մմ մետաղական խողովակներից՝ ներկված սպիտակ գույնով: Մետաղական ոտքերի տակ օգտագործել՝ բարձիկներ: Սեղանածածկին նախատեսել անցքեր՝ սարքավորումների համար: Մետաղական մասի որոշ հատվածներ նարնջագույն ներկելը, գունային երանգները եւ պրոֆիլը, ինչպես նաեւ սարքավորումների չափերը համաձայնեցնել պատվիրատուի հետ:	1
17	Կողադիր սեղան 2	Չափսերը՝ 1500x400x660 մմ Պատրաստված է լամինացված ԴՍՊ-ից՝ 18 մմ հաստությամբ: Սեղանածածկի եզրերը՝ համապատասխան գույնի պրոֆիլապատ՝ 40մմ հաստություն ստանալու համար: Սեղանի ոտքերն ու ՝ կոնստրուկցիան 20x30մմ մետաղական խողովակներից՝ ներկված սպիտակ գույնով: Կիրառել 10x20մմ մետաղական խողովակ եւ 20x20 անկյունակ՝ բաց դարակի համար: Մետաղական ոտքերի տակ՝ օգտագործել բարձիկներ: Մետաղական մասի որոշ հատվածներ նարնջագույն ներկելը: Գունային երանգները եւ պրոֆիլը համաձայնեցնել պատվիրատուի հետ:	1

** Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

Փաթեթավորումը	Գործարանային
*Պարտադիր պայման՝ ապրանքը չպետք է լինի օգտագործված, միացումները պետք է կատարվեն մինի ֆիքսերով և շկանտերով: **Ապրանքի տեղափոխումը կատարվում է մատակարարի կողմից:	

ԳՆՈՐԴ

ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե
Հասցե՝ Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900013220042
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր
քարտուղար---------- Գ. Գրիգորյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

<<ՖՈՏՈՆ>> ՍՊԸ
Ք. Երևան,Ռոստոմի 58,
<<ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 16044050085000,
ՀՎՀՀ 90036001

Ն. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված N 2

ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-19/07-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**						
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	39121100/6	Գրասեղան 1	32000	64000	128288	128288	128288	128288	128288
2	39121100/7	Գրասեղան 1*	5000	10000	18646	18646	18646	18646	18646
3	39121100/8	Գրասեղան 2	9000	18000	35876	35876	35876	35876	35876
4	39121100/9	Գրասեղան 3	14000	28000	56334	56334	56334	56334	56334
5	39121420/3	Կողաղիր սեղան 1	25000	50000	100068	100068	100068	100068	100068
6	39121200/4	Դիմաղիր սեղան	3000	6000	12236	12236	12236	12236	12236
7	39121200/3	Անցակետի սեղան	4000	8000	16026	16026	16026	16026	16026
10	39141260/3	Զգեստապահարան 1	37000	74000	146628	146628	146628	146628	146628
12	39121520/8	Գրապահարան 1	60000	120000	239760	239760	239760	239760	239760
14	39121520/10	Գրապահարան 3	30000	60000	119376	119376	119376	119376	119376
15	39121200/5	Տպիչ սեղան	5000	10000	20050	20050	20050	20050	20050

16	39121100/10	Գրասեղան 4	4000	8000	16740	16740	16740	16740	16740
17	39121420/4	Կողադիր սեղան 2	4500	9000	18508	18508	18508	18508	18508

Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե
Հասցե՝ Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900013220042
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր
քարտուղար----------Գ. Գրիգորյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

<<ՖՈՏՈՆ>> ՍՊԸ
Ք. Երևան,Ռոստոմի 58,
<<ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 16044050085000,
ՀՎՀՀ 90036001

Ա. ԴԱՎԹՅԱՆ
Կ.Տ

Հավելված N 3
ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-19/07-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
<<ՖՈՏՈՆ>> ՍՊԸ
Ք. Երևան,Ռոստոմի 58,
<<ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 16044050085000,
ՀՎՀՀ 90036001

_____
Ն. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Կ.Տ

Պատվիրատու
_____
_____
գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-19/07-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց **Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____ _____
ազգանուն, անուն ազգանուն, անուն

_____ _____
Ստորագրություն ստորագրություն